

**Ներառումից՝ բացառում. հայակական ՀԿ-ների մասնակցությունը ԱՆՌԾ-ի գործընթացում**

*Արմինե Իշխանյան*

Համառոտագիր

Սովետական Միության փլուզումից հետո դոնոր գործակալությունները հետևեցին քաղաքացիական հասարակության զարգացման գաղափարին, որպես՝ ժողովրդայնացման և հաջող անցումային գործընթացների գրավական: Սկզբունքը հետևյալն էր. ավելի ամուր քաղաքացիական հասարակությունը կնպաստի արդյունավետ կառավարմանը, կակտիվացնի քաղաքացիական մասնակցությունը և կամրապնդի սոցիալական վստահությունը: Ուսումնասիրելով հասարակական կազմակերպությունների (ՀԿ) մասնակցությունը Հայաստանի Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրում (ԱՆՌԾ)՝ սույն հոդվածը հարցադրում է, թե Հայաստանի կայուն զարգացման և արդյունավետ կառավարման գործընթացներում ՀԿ-ները ինչպիսի ներդրում ունեն: Հորդվածում օգտագործվում են «ներառում», «բացառում» և «հիբրիդ» հասկացությունները՝ նկարագրելու այն մոտեցումները, որոնցով ուղղորդվում են ՀԿ-ները՝ ԱՆՌԾ-ի իրականացման փուլում: Վերլուծելով վերոհիշյալ մոտեցումները՝ հոդվածը ներկայացնում է Հայաստանի քաղաքացիական հասարակության բազմատարրությունը և ուսումնասիրում է այդ մոտեցումների ազդեցությունը այն հնարավորությունների վրա, որոնք ՀԿ-ները օգտագործում են քաղաքականության ձևավորման գործընթացին մասնակցելիս: Ալբերթ Հիրսշմանի (1970թ.) ելքի, ձայնի և անձնվիրության վերաբերյալ ուսումնասիրությունները բավական օգտավետ էին ՀԿ-ների վերոնշյալ մոտեցումների քննարկման համար, սակայն նրա աշխատությունը ամբողջական կիրառման ենթակա չէր՝ հաշվի առնելով դիտարկվող կազմակերպությունների բնույթը, ինչպես նաև ներդրված քաղաքականությունը և իշխանության շարժիչ ուժերը: «Մոտեցումներ»-ն այստեղ օգտագործված են կարևորելու ՀԿ-ների թե՛ ռազմավարությունը և թե՛ քաղաքական կամ գաղափարախոսական դիրքորոշումները: Մայքլ Ռիվկինը (2004թ.) նույնպես օգտագործել է նմանատիպ մոտեցում առողջապահության ոլորտում համապատասխան գործընթացների նկարագրության ժամանակ: